*Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք!*

# ՎՐԱՑԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ

**(ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՔ)**

342
Վ-99

ՀԱՄԱՎՐԱՑԱԿԱՆ
ԱՐՏԱԿԱՐԳ 8-ՐԴ
ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻՆ

342
Վ-99

Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք

01 MAR 20
05 FEB 20

# ՎՐԱՑԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ

(ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՔ)

1010
42608

12 AUG 2013
34.632

Պատվեր № 497 Գլավլիտ № 16036 Տիրաժ 200

Վր. ԿԿ(բ) Կ «Զարյա Վոստոկա» հրատ. կոմբ. տպ.

ՎՐԱՑԱԿԱՆ ԽՍՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇՈՒՄԸ

# ՎՐԱՑԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Լսելով Սահմանադրական Հանձնաժողովի նախագահ ընկեր Լ. Պ. ԲԵՐԻԱՅԻ զեկուցումը Վրացական ԽՍՀ Սահմանադրության նախագծի մասին. Վրացական ԽՍՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահությունը վորոշում է.

1. Հավանություն տալ Վրացական ԽՍՀ Կենտգործկոմի Սահմանադրական Հանձնաժողովի ներկայացրած Վրացական ԽՍՀ Սահմանադրության նախագծին.

2. Վրացական ԽՍՀ Սահմանադրության նախագիծը ներկայացնել Վրացական ԽՍՀ Խորհուրդների Արտակարգ 8-րդ Համագումարի քննության.

Վրացական ԽՍՀ Կենտգործկոմի նախագահ՝

Ֆ. ՄԱԽԱՐԱՁԵ

Վրացական ԽՍՀ Կենտգործկոմի քարտուղար՝

Թ. ԺՂԵՆՏԻ

1937 թ. փետրվարի 1

ք. Թբիլիսի

ՎՐԱՑԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ

## (ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՔ)

ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՎՐԱՑԱԿԱՆ ԽՍՀ ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՅԵՎ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՏԱԾ ՎՐԱՑԱԿԱՆ ԽՍՀ ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՎՐԱՑԱԿԱՆ ԽՍՀ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԱՐՏԱԿԱՐԳ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

# ԳԼՈՒԽ I

## ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ՀՈԴՎԱԾ 1. Վրացական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը բանվորների ու գյուղացիների սոցիալիստական պետություն է։

ՀՈԴՎԱԾ 2. Վրացական ԽՍՀ քաղաքական հիմքն են կազմում աշխատավորների պատգամավորների Խորհուրդները, որոնք աճել ու ամրապնդվել են կալվածատերերի ու կապիտալիստների իշխանությունը տապալելու և պրոլետարիատի դիկտատուրան նվաճելու հետևանքով։

ՀՈԴՎԱԾ 3. Ամբողջ իշխանությունը Վրացական ԽՍՀ-ում պատկանում է քաղաքի ու գյուղի աշխատավորներին՝ հանձինս աշխատավորների պատգամավորների Խորհուրդների։

ՀՈԴՎԱԾ 4. Վրացական ԽՍՀ տնտեսական հիմքն են կազմում տնտեսության սո-

ցիալիստական սիստեմը և արտադրության գործիքների ու միջոցների սոցիալիստական սեփականությունը, վորոնք հաստատվել են տնտեսության կապիտալիստական սիստեմի լիկվիդացիայի, արտադրության գործիքների ու միջոցների մասնավոր սեփականության վերացման և մարդու կողմից մարդու շահագործումը վոչնչացնելու հետևանքով:

ՀՈԴՎԱԾ 5. Սոցիալիստական սեփականությունը Վրացական ԽՍՀ-ում ունի կամ պետական սեփականության ձև (համաժողովրդական ունեցվածք), կամ կոոպերատիվ-կոլտնտեսային սեփականության ձև (առանձին կոլտնտեսությունների սեփականություն, կոոպերատիվ միավորումների սեփականություն):

ՀՈԴՎԱԾ 6. Հողը, նրա ընդերքը, ջրերը, անտառները, գործարանները, ֆաբրիկաները, հանքահորերը, հանքերը, յերկաթուղային, ջրային ու ոդային տրանսպորտը, բանկերը, կապի միջոցները, պետության կազմակերպած խոշոր գյուղատնտեսական ձեռնարկությունները (խորհտնտեսությունները, մեքենա-տրակտորային կայանները և այլն), ինչպես նաև կոմունալ ձեռնարկությունները և հիմնական բնակարանային ֆոնդը քաղաքներում ու արդյունաբերական կենտրոններում, հանդիսանում են պետական սեփականություն, այսինքն՝ համաժողովրդական ունեցվածք:

ՀՈԴՎԱԾ 7. Կոլտնտեսություններում ու կոոպերատիվ կազմակերպություններում հասարակական ձեռնարկություններն իրենց կենդանի ու մեռյալ ինվենտարով, կոլտնտեսությունների և կոոպերատիվ կազմակերպությունների կողմից արտադրվող արտադրանքը, նմանապես և նրանց հասարակական շենքերը, կազմում են կոլտնտեսությունների ու կոոպերատիվ կազմակերպությունների հասարակական, սոցիալիստական սեփականությունը:

Յուրաքանչյուր կոլտնտեսականի տընտեսություն, բացի հասարակական կոլտնտեսային տնտեսությունից ստացած հիմնական յեկամուտից, անձնական ոգտագործման համար ունի վոչ-մեծ տնամերձ հողամաս և, վորպես անձնական սեփակա-

նություն՝ օժանդակ տնտեսության առանձին հողամասում, բնակելի տուն, մթերատու անասուններ, թռչուններ և գյուղատնտեսական մանր ինվենտար՝ գյուղատնտեսական արտելի կանոնադրության համաձայն:

ՀՈԴՎԱԾ 8. Կոլտնտեսությունների զբաղեցրած հողն ամրացվում է նրանց՝ անվճար և անժամկետ օգտագործման համար, այսինքն՝ առհավետ:

ՀՈԴՎԱԾ 9. Տնտեսության սոցիալիստական սիստեմի հետ միասին, վորը հանդիսանում է տնտեսության տիրապետող ձևը Վրացական ԽՍՀ-ում, օրենքով թույլատրվում է մենատնտես գյուղացիների ու տնայնագործների մանր մասնավոր տնտեսություն, վորը հիմնված է անձնական աշխատանքի վրա և բացառում է ուրիշի աշխատանքի շահագործումը:

ՀՈԴՎԱԾ 10. Քաղաքացիների անձնական սեփականության իրավունքն իրենց աշխատանքային եկամուտների ու խնայողությունների նկատմամբ, բնակելի տան և օժանդակ տնային տնտեսության նկատմամբ, տնային տնտեսության և գործածության առարկաների նկատմամբ, անձնական սպառման ու հարմարության առարկաների նկատմամբ, նմանապես քաղաքացիների անձնական սեփականությունը ժառանգելու իրավունքը—պահպանվում է օրենքով:



ՀՈԴՎԱԾ 11. Վրացական ԽՍՀ տնտեսական կյանքը վորոշվում և ուղղություն է ստանում պետական ժողովրդատնտեսական պլանով հօգուտ հասարակական հարստության ավելացման, Վրացական ԽՍՀ աշխատավորների նյութական ու կուլտուրական մակարդակի անշեղ բարձրացման, ԽՍՀՄ անկախության ամրացման և նրա հզորության ու պաշտպանունակության ուժեղացման:

ՀՈԴՎԱԾ 12. Վրացական ԽՍՀ-ում աշխատանքը հանդիսանում է աշխատանքի ընդունակ յուրաքանչյուր քաղաքացու պարտականությունը յեվ պատվի գործը՝ «ով չի աշխատում, նա չի ուտում» սկզբունքի համաձայն:

Վրացական ԽՍՀ-ում իրականացվում է

սոցիալիզմի «յուրաքանչյուրից՝ ըստ իր ընդունակության, յուրաքանչյուրին՝ ըստ իր աշխատանքի» սկզբունքը:

## ԳԼՈՒԽ II

## ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

**ՀՈԴՎԱԾ 13.** Տնտեսական և քաղաքական գծով, նմանապես և պաշտպանության գծով փոխադարձ օգնությունն իրագործելու նպատակով Վրացական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը կամավոր կերպով միացել է իրավահավասար Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների՝ Ռուսաստանի ԽՖՍՀ, Ուկրաինական ԽՍՀ, Բելոռուսական ԽՍՀ, Ադրբեջանական ԽՍՀ, Հայկական ԽՍՀ, Թուրքմենական ԽՍՀ, Ուզբեկական ԽՍՀ, Տաջիկական ԽՍՀ, Ղազախական ԽՍՀ, Կիրգիզական ԽՍՀ հետ Միութենական պետության — Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության մեջ:

Ելնելով դրանից, Վրացական ԽՍՀ ապահովում է ԽՍՀ Միությանը՝ հանձին



իշխանության նրա բարձրագույն մարմինների և պետական կառավարման մարմինների այն իրավունքները, վորոնք վորոշված են ԽՍՀ Միության Սահմանադրության 14-րդ հոդվածով:

ԽՍՀ Միության Սահմանադրության 14-րդ հոդվածի սահմաններից դուրս, Վրացական ԽՍՀ իրականացնում է պետական իշխանությունն ինքնուրույն կերպով, լիովին պահպանելով իր սուվերեն իրավունքները:

**ՀՈԴՎԱԾ 14.** Վրացական ԽՍՀ՝ հանձին իշխանության իր բարձրագույն մարմինների և պետական կառավարման մարմինների՝

ա) ընդունում է Վրացական ԽՍՀ Սահմանադրությունը, մտցնում է նրա մեջ փոփոխություններ ու լրացումներ, իրականացնում է նրա կատարման վերահսկողությունը.

բ) հաստատում է Աբխազական և Աջարական Խորհրդային Սոցիալիստական Ինքնավար Հանրապետությունների Սահմանադրությունները.

գ) վարոշում է Աբխազական և Աջարական ԽՍԻՀ և Հարավ-Օսեթիայի Ինքնավար մարզի սահմանները.

դ) ԽՍՀ Միության Գերագույն Խորհրդի հաստատմանն է ներկայացնում նոր ինքնավար հանրապետությունների և ինքնավար մարզերի ստեղծումը Վրացական ԽՍՀ կազմում.

յե) սահմանում է Վրացական ԽՍՀ սահմանները և շրջանային բաժանումը.

զ) հրատարակում է Վրացական ԽՍՀ օրենքները, օրենքների ժողովածուները և գերագույն կառավարման ակտերը.

է) պահպանում է պետական կարգն ու քաղաքացիների իրավունքները.

ը) հաստատում է Վրացական ԽՍՀ ժողովրդա-տնտեսական պլանը.

թ) հաստատում է Վրացական ԽՍՀ պետական բյուջեն.

ժ) ղեկավարում է Աբխազական և Աջարական ԽՍԻՀ, Հարավ-Օսեթիայի Ինքնավար մարզի բյուջեների և շրջանների ու քաղաքների տեղական բյուջեների իրականացումը.



ի) ԽՍՀ Միության օրենսդրությանը համապատասխան, սահմանում է պետական ու տեղական հարկերը, գանձումներն ու ոչ հարկային եկամուտները.

լ) վարում է բանկերի, արդյունաբերական ու գյուղատնտեսական հիմնարկությունների ու ձեռնարկությունների, հանրապետության ենթակա առևտրական ձեռնարկությունների կառավարման գործը, ինչպես նաև ղեկավարում է տեղական արդյունաբերությունը.

խ) իրականացնում է Միությանը ենթակա ձեռնարկությունների ու հիմնարկությունների դրության ու կառավարման վերահսկողությունը.

ծ) սահմանում է հողից, նրա ընդերքից, անտառներից ու ջրերից օգտվելու կարգը.

կ) վարում է քաղաքների և այլ բնակելի տեղերի բարեկարգության գործը, բնակարանային շինարարությունը և բնակարանային ու կոմունալ տնտեսության կառավարումը.

հ) ղեկավարում է ճանապարհային շի-

նարարությունը, տեղական տրանսպորտն ու կապը·

ձ) վարում է աշխատանքային օրենսդրության գործը·

ղ) ղեկավարում է առողջապահության գործը·

ճ) վարում է սոցիալական ապահովության գործը·

մ) ղեկավարում է ապահովագրական ու խնայողական գործը·

յ) ղեկավարում է տարրական, միջնակարգ և բարձրագույն կրթության գործը·

ն) ղեկավարում է Վրացական ՍՍՀ կուլտուր-կրթական և գիտական կազմակերպություններն ու հիմնարկությունները և կառավարում է համահանրապետական նշանակություն ունեցող կուլտուր-կրթական ու գիտական կազմակերպություններն ու հիմնարկությունները·

շ) ղեկավարում է քաղաքացիների մեջ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի լայն արմատավորման գործը·

ո) կազմակերպում է դատական մարմիններ·



չ) ընձեռում է Վրացական ՍՍՀ քաղաքացիության իրավունքներ·

պ) իրականացնում է Վրացական ՍՍՀ դատական մարմինների կողմից դատապարտված քաղաքացիների ամնիստիայի ու ներման իրավունքը:

ՀՈԴՎԱԾ 15· Վրացական ՍՍՀ իրեն է վերապահում Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունից ազատորեն դուրս գալու իրավունքը:

1010
42808

ՀՈԴՎԱԾ 16· Վրացական ՍՍՀ տերրիտորիան չի կարող փոփոխության ենթարկվել առանց իր համաձայնության:

ՀՈԴՎԱԾ 17· ՍՍՀ Միության օրենքները պահում են իրենց ուժը Վրացական ՍՍՀ տերրիտորիայում:

ՀՈԴՎԱԾ 18· Վրացական ՍՍՀ քաղաքացիները հանդիսանում են ՍՍՀ Միության քաղաքացիներ:

Մյուս բոլոր միութենական հանրապետությունների քաղաքացիները Վրացական ՍՍՀ տերրիտորիայում օգտվում են Վրացական ՍՍՀ քաղաքացիների հետ միատեսակ իրավունքներից:

ՀՈԴՎԱԾ 19. Վրացական ԽՍՀ բաղկացած է Աբխազական Ինքնավար Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունից, Աջարական Ինքնավար Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունից, Հարավ-Օսեթիայի Ինքնավար մարզից, Աբաշայի, Աղբուլաղի, Ադիգենի, Ամբրոլաուրիի, Ասպինձայի, Ախալքալաքիի, Ախալցիխեյի, Բաղդադիի, Բաշկիչեթի, Բոգդանովկայի, Բորժոմիի, Բորչալուի, Վանիի, Գեգեճկորիի, Գորիի, Գուրջաանիի, Ջուղելու, Դուշեթիի, Զեմո-Սվանեթիայի, Զուգդիդիի, Կազբեկիի, Ղարայազի, Կասպիի, Ղվարելիի, Քվեմո-Սվանեթիայի, Քութայիսիի, Լաղոդեխիի, Լանչխութիի, Լյուքսեմբուրգի, Մախարաձեյի, Օնիի, Օրջոնիկիձեյի, Սագարեջոյի, Սամտրեդիայի, Սիղնախիի, Թելավիի, Թիանեթիի, Թբիլիսիի, Տղվիբուլիի, Խաշուրիի, Խոբիի, Ցագերիի, Ծալենջիխիի, Ծալկայի, Ծուլուկիձեյի, Ցխակայայի, Ճիաթուրայի, Չոխատաուրիի, Չխարիի, Չխորոծկույի շրջաններից և շրջանների կազմի մեջ չմտնող Թբիլիսի և Փոթի քաղաքներից:



ՀՈԴՎԱԾ 20. Աբխազական Ինքնավար Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը բաղկացած է Գագրիի, Գալիի, Գուդաուտիի, Սուխումիի, Օչեմչիրիի շրջաններից և շրջանների կազմի մեջ չմտնող Սուխումի քաղաքից:

ՀՈԴՎԱԾ 21. Աջարական Ինքնավար Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը բաղկացած է Բաթումիի, Քեդիի, Քոբուլեթիի, Խուլոյի շրջաններից և շրջանների կազմի մեջ չմտնող Բաթումի քաղաքից:

ՀՈԴՎԱԾ 22. Հարավ-Օսեթիայի Ինքնավար մարզը բաղկացած է Ջավայի, Զնաուրիի, Լենինգորիի, Ստալինիրի շրջաններից և շրջանների կազմի մեջ չմտնող Ստալինիր քաղաքից:

ՀՈԴՎԱԾ 23. Վրացական ԽՍՀ օրենքները նույնանման ուժ ունեն Վրացական ԽՍՀ ողջ տերրիտորիայում:

Աբխազական ու Աջարական ԽՍԻՀ և Վրացական ԽՍՀ օրենքների մեջ տարամիտության դեպքում գործում է Վրացական ԽՍՀ օրենքը:

ՀՈԴՎԱԾ 24. Աբխազական և Աջարական ԽՍԻՀ ունեն իրենց Սահմանադրությունները, վորոնք հաշվի յեն առնում այդ հանրապետությունների առանձնահատկությունները և կառուցված են Վրացական ԽՍՀ Սահմանադրությանն ու ԽՍՀ Միության Սահմանադրությանը լիովին համապատասխան:

Հարավ – Ոսեթիայի ինքնավար մարզն ունի «Կանոնադրություն Ինքնավար մարզի մասին», վորը հաստատում է Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհուրդը:

## ԳԼՈՒԽ III

## ՎՐԱՑԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 25. Վրացական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության պետական իշխանության բարձրագույն մարմինը



հանդիսանում է Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհուրդը:

ՀՈԴՎԱԾ 26. Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհուրդը իրականացնում է Վրացական ԽՍՀ Սահմանադրության 13 և 14 հոդվածների համաձայն Վրացական ԽՍՀ վերապահված բոլոր իրավունքները, վորչափով նրանք, ներկա Սահմանադրության ուժով, չեն մտնում Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդին հաշվետու Վրացական ԽՍՀ մարմինների՝ Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության, Վրացական ԽՍՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի և Վրացական ԽՍՀ Ժողովրդական Կոմիսարիատների իրավունքների մեջ:

ՀՈԴՎԱԾ 27. Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհուրդը հանդիսանում է Վրացական ԽՍՀ միակ օրենսդրական մարմինը:

ՀՈԴՎԱԾ 28. Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհուրդն ընտրվում է հանրապետության քաղաքացիների կողմից ըստ ընտրական օկրուգների, 15 հազար բնակչությունից մի պատգամավոր նորմայով:

ՀՈԴՎԱԾ 29. Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհուրդն ընտրվում է չորս տարի ժամանակով:

ՀՈԴՎԱԾ 30. Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի նստաշրջանները գումարում է Գերագույն Խորհրդի Նախագահությունը տարեկան յերկու անգամ:

Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահությունը արտակարգ նստաշրջաններ գումարում է ըստ իր հայեցողության կամ Գերագույն Խորհրդի պատգամավորների վոչ պակաս քան մեկ յերրորդի պահանջով:

ՀՈԴՎԱԾ 31. Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհուրդն ընտրում է իր նախագահին և նրա յերկու տեղակալին:

Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի նախագահը ղեկավարում է Գերագույն Խորհրդի նիստերը և տնօրինում է նրա ներքին կարգը:

ՀՈԴՎԱԾ 32. Օրենքը համարվում է հաստատված, յեթե այն ընդունված է Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի կողմից ձայների հասարակ մեծամասնությամբ:



ՀՈԴՎԱԾ 33. Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընդունած օրենքները հրապարակվում են Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության Նախագահի ու քարտուղարի ստորագրություններով:

ՀՈԴՎԱԾ 34. Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհուրդն ընտրում է Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահություն, բաղկացած՝ Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության նախագահից, նրա յերկու տեղակալներից, Նախագահության քարտուղարից և Նախագահության 9 անդամներից:

ՀՈԴՎԱԾ 35. Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահությունն իր վողջ գործունեության համար հաշվետու է Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդին։

ՀՈԴՎԱԾ 36. Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահությունը՝

ա) հրավիրում է Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի նստաշրջաններ,

բ) մեկնաբանում է Վրացական ԽՍՀ

գործող օրենքները, հրատարակում է հրամանագրեր.

գ) կատարում է համաժողովրդական հարցում (ռեֆերենդում).

դ) բեկանում է Վրացական ԽՍՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի, Ինքնավար Հանրապետությունների ժողովրդական Կոմիսարների Խորհուրդների որոշումներն ու կարգադրությունները, ինչպես նաև Ինքնավար մարզի աշխատավորների պատգամավորների Խորհրդի որոշումներն ու կարգադրությունները՝ օրենքին անհամապատասխան լինելու դեպքում.

ե) Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի նստաշրջանների միջև ընկած ժամանակաշրջանում ազատում է պաշտոնից և նշանակում է Վրացական ԽՍՀ առանձին ժողովրդական կոմիսարներ Վրացական ԽՍՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահի առաջարկությամբ, հետագայում ներկայացնելով Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդին ի հաստատություն.

զ) ընձեռում է Վրացական ԽՍՀ քաղաքացիության իրավունք,



է) պարգևատրում է պատվո գրերով և տալիս է Վրացական ԽՍՀ պատվավոր կոչումներ,

ը) իրականացնում է Վրացական ԽՍՀ դատական մարմինների կողմից դատապարտված քաղաքացիներին ներումն շնորհելու իրավունքը:

ՀՈԴՎԱԾ 37. Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհուրդն ընտրում է մանդատային հանձնաժողով, որն ստուգում է Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի պատգամավորների լիազորությունները:

Մանդատային հանձնաժողովի առաջարկությամբ, Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհուրդը որոշում է կամ ընդունել լիազորությունները կամ բեկանել առանձին պատգամավորների ընտրությունները:

ՀՈԴՎԱԾ 38. Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհուրդը, երբ անհրաժեշտ համարի, նշանակում է քննիչ և վերստուգիչ հանձնաժողովներ ամեն մի հարցի առթիվ:

Բոլոր հիմնարկությունները և պաշտոնատար անձերը պարտավոր են կատարել

այլ հանձնաժողովների պահանջները և ներկայացնել նրանց անհրաժեշտ նյութեր և փաստաթղթեր:

ՀՈԴՎԱԾ 39. Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի պատգամավորը չի կարող դատական պատասխանատվության կանչվել կամ ձերբակալվել՝ առանց Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի համաձայնության, իսկ Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի նստաշրջանների միջև ընկած ժամանակաշրջանում՝ առանց Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության համաձայնության:

ՀՈԴՎԱԾ 40. Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի լիազորությունները լրանալուց հետո Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահությունը պահում է իր լիազորությունները մինչև Վրացական ԽՍՀ նորընտիր Գերագույն Խորհրդի կողմից Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի նոր Նախագահության կազմելը:

ՀՈԴՎԱԾ 41. Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի լիազորությունները լրանալուց հետո Վրացական ԽՍՀ Գերագույն



Խորհրդի Նախագահությունը նշանակում է նոր ընտրություններ՝ Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի լիազորությունները լրանալու օրից ոչ ուշ, քան յերկու ամսվա ժամկետում:

ՀՈԴՎԱԾ 42. Վրացական ԽՍՀ նորընտիր Գերագույն Խորհուրդը հրավիրվում է Վրացական ԽՍՀ նախկին կազմի Գերագույն Խորհրդի Նախագահության կողմից ոչ ուշ, քան ընտրություններից մի ամիս հետո:

ՀՈԴՎԱԾ 43. Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհուրդը կազմում է Վրացական ԽՍՀ կառավարություն՝ Վրացական ԽՍՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդ:

## ԳԼՈՒԽ IV

## ՎՐԱՑԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 44. Վրացական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության պետական իշխանության բարձրագույն գոր-

ծադիր և կարգադրիչ մարմինը հանդիսանում է Վրացական ԽՍՀ ժողովրդական կոմիսարների Խորհուրդը:

ՀՈԴՎԱԾ 45. Վրացական ԽՍՀ ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը պատասխանատու է Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի առջև և հաշվետու է նրան, իսկ Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի նստաշրջանների միջև ընկած ժամանակաշրջանում – Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության առջև, որին հաշվետու է:

ՀՈԴՎԱԾ 46. Վրացական ԽՍՀ ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը ԽՍՀ Միության և Վրացական ԽՍՀ գործող օրենքների, ԽՍՀ Միության ժողովրդական Կոմիսարների Խորհրդի որոշումների ու կարգադրությունների հիման վրա և ի կատարումն նրանց հրատարակում է որոշումներ ու կարգադրություններ և ստուգում է նրանց կատարումը:

ՀՈԴՎԱԾ 47. Վրացական ԽՍՀ ժողովրդական Կոմիսարների Խորհրդի որոշումներն ու կարգադրությունները պար-



տադիր են կատարման համար Վրացական ԽՍՀ ամբողջ տերրիտորիայում:

ՀՈԴՎԱԾ 48. Վրացական ԽՍՀ ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը՝

ա) միավորում և ուղղություն է տալիս Վրացական ԽՍՀ ժողովրդական Կոմիսարիատների և նրան ենթակա մյուս տնտեսական ու կուլտուրական հիմնարկությունների աշխատանքին, միավորում ու ստուգում է ընդհանուր-միութենական ժողովրդական Կոմիսարիատների լիազորների աշխատանքը,

բ) միջոցներ է ձեռք առնում իրականացնելու ժողովրդա-տնտեսական պլանը, պետական և տեղական բյուջեն,

գ) միջոցներ է ձեռք առնում ապահովելու հասարակական կարգը, պաշտպանելու պետության շահերը և պահպանելու քաղաքացիների իրավունքները,

դ) ուղղություն է տալիս և ստուգում է ինքնավար հանրապետությունների ժողովրդական Կոմիսարների Խորհուրդների և Ինքնավար մարզի աշխատավորների պատգամավորների Խորհրդի գործադիր

կոմիտեյի աշխատանքը, ղեկավարում յեվ ստուգում է շրջանային ու քաղաքային աշխատավորների պատգամավորների Խորհուրդների գործադիր կոմիտեների աշխատանքը,

յե) անհրաժեշտության դեպքում Վրացական ԽՍՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդին կից կազմվում են հատուկ կոմիտեներ ու Գլխավոր Վարչություններ՝ տնտեսական ու կուլտուրական շինարարության գործերի գծով:

ՀՈԴՎԱԾ 49. Վրացական ԽՍՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդն իրավունք ունի բեկանել Ինքնավար մարզի աշխատավորների պատգամավորների Խորհրդի գործադիր կոմիտեյի վորոշումներն ու կարգադրությունները, ինչպես նաև կասեցնել ինքնավար հանրապետությունների Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդների վորոշումներն ու կարգադրությունները, Ինքնավար մարզի աշխատավորների պատգամավորների Խորհրդի վորոշումներն ու կարգադրությունները:

Վրացական ԽՍՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդն իրավունք ունի բեկանել Վրացական ԽՍՀ Ժողովրդական Կոմիսարների հրամաններն ու հրահանգները:



ՀՈԴՎԱԾ 50. Վրացական ԽՍՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը կազմվում է Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի կողմից հետեվյալ կազմով՝

Վրացական ԽՍՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի Նախագահ,

Վրացական ԽՍՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի Նախագահի տեղակալներ,

Վրացական ԽՍՀ Պետական պլանային հանձնաժողովի Նախագահ,

Վրացական ԽՍՀ Ժողովրդական Կոմիսարներ՝

Սննդի արդյունաբերության,

Թեթև արդյունաբերության,

Անտառային արդյունաբերության,

Հողագործության,

Հացահատիկային և անասնաբուծական խորհտնտեսությունների,

Ֆինանսների,
Ներքին առևտրի,
Ներքին գործերի,
Արդարադատության,
Առողջապահության,
Լուսավորության,
Տեղական արդյունաբերության,
Կոմունալ տնտեսության,
Սոցիալական ապահովության,
Մթերումների կոմիտեի լիազոր,
Արվեստների գործերի վարչության պետ,
Ընդհանուր — միութենական ժողովրդական կոմիսարիատների լիազորներ:

ՀՈԴՎԱԾ 51. Վրացական ԽՍՀ կառավարությունը կամ Վրացական ԽՍՀ ժողովրդական կոմիսարը, որոնց ուղղված է Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի պատգամավորի հարցումը, պարտավոր են ոչ ավելի, քան յերեք որվա ժամկետում բանավոր կամ գրավոր պատասխան տալ Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդում:

ՀՈԴՎԱԾ 52. Վրացական ԽՍՀ ժողովրդական կոմիսարները ղեկավարում են Վրացական ԽՍՀ իրավասության մեջ մտնող պետական կառավարման ճյուղերը:

ՀՈԴՎԱԾ 53. Վրացական ԽՍՀ ժողովրդական կոմիսարները հրատարակում են համապատասխան ժողովրդական կոմիսարիատների իրավասության սահմաններում հրամաններ և հրահանգներ ԽՍՀ Միության և Վրացական ԽՍՀ օրենքների, ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի և Վրացական ԽՍՀ ժողովրդական կոմիսարների Խորհրդի որոշումների ու կարգադրությունների, ԽՍՀ Միության միութենական — հանրապետական ժողովրդական կոմիսարիատների հրամանների ու հրահանգների հիման վրա և ի կատարումն նրանց, և ստուգում են նրանց կատարումը:

ՀՈԴՎԱԾ 54. Վրացական ԽՍՀ ժողովրդական կոմիսարիատները լինում են կամ միութենական — հանրապետական կամ հանրապետական:

ՀՈԴՎԱԾ 55. Վրացական ԽՍՀ միութենական – հանրապետական ժողովրդական կոմիսարիատներ հանդիսանում են հետևյալ ժողովրդական կոմիսարիատները՝

Սննդի արդյունաբերության,
Թեթև արդյունաբերության,
Անտառային արդյունաբերության,
Հողագործության,
Հացահատիկային և անասնաբուծական խորհտնտեսությունների,
Ֆինանսների,
Ներքին առևտրի,
Ներքին գործերի,
Արդարադատության,
Առողջապահության:

ՀՈԴՎԱԾ 56. Վրացական ԽՍՀ հանրապետական ժողովրդական կոմիսարիատներ հանդիսանում են հետևյալ ժողովրդական կոմիսարիատները՝

Լուսավորության,
Տեղական արդյունաբերության,
Կոմունալ տնտեսության,
Սոցիալական ապահովության:



ՀՈԴՎԱԾ 57. Վրացական ԽՍՀ միութենական – հանրապետական ժողովրդական կոմիսարիատները ղեկավարում են Վրացական ԽՍՀ պետական կառավարման իրենց հանձնարարված ճյուղերը, բացառությամբ միայն սահմանափակ թվով ձեռնարկությունների՝ ըստ ԽՍՀ Միության Գերագույն Խորհրդի Նախագահության կողմից հաստատված ցուցակի, ենթարկվելով ինչպես Վրացական ԽՍՀ ժողովրդական կոմիսարների Խորհրդին, նույնպես և ԽՍՀ Միության համապատասխան միութենական – հանրապետական ժողովրդական կոմիսարիատներին:

ՀՈԴՎԱԾ 58. Վրացական ԽՍՀ հանրապետական ժողովրդական կոմիսարիատները ղեկավարում են պետական կառավարման իրենց հանձնարարված ճյուղերը, ենթարկվելով անմիջականորեն Վրացական ԽՍՀ ժողովրդական կոմիսարների Խորհրդին:

## ԳԼՈՒԽ V

## ԱԲԽԱԶԱԿԱՆ ՅԵՎ ԱՋԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 59. Աբխազական և Աջարական Խորհրդային Սոցիալիստական Ինքնավար Հանրապետություններում պետական իշխանության բարձրագույն մարմիններ հանդիսանում են այդ հանրապետությունների Գերագույն Խորհուրդները:

ՀՈԴՎԱԾ 60. Ինքնավար հանրապետության Գերագույն Խորհուրդն ընտրում են հանրապետության քաղաքացիները 4 տարի ժամկետով՝ Ինքնավար հանրապետության Սահմանադրությամբ սահմանված ներկայացուցչության նորմաներով:

ՀՈԴՎԱԾ 61. Ինքնավար հանրապետության Գերագույն Խորհուրդը հանդիսանում է այդ հանրապետության միակ օրենսդրական մարմինը:



ՀՈԴՎԱԾ 62. Ինքնավար հանրապետության Գերագույն Խորհուրդը՝

ա) Վրացական ԽՍՀ Սահմանադրության 24-րդ հոդվածի համաձայն, ընդունում է Ինքնավար հանրապետության Սահմանադրությունը և ներկայացնում է այն Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդին՝ ի հաստատություն.

բ) Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի հաստատմանն է ներկայացնում նոր շրջանների ու քաղաքների ստեղծումը, ինչպես նաև սահմանում է նրանց սահմանները.

գ) հաստատում է Ինքնավար հանրապետության ժողովրդա-տնտեսական պլանը և բյուջեն.

դ) պարգևատրում է պատվո գրերով և տալիս է Ինքնավար հանրապետության պատվավոր կոչումներ:

ՀՈԴՎԱԾ 63. Ինքնավար հանրապետության Գերագույն Խորհուրդն ընտրում է

ԽՍԻՀ Գերագույն Խորհրդի Նախագահություն հետևյալ կազմով՝ ԽՍԻՀ Գերագույն Խորհրդի Նախագահության նախագահ, նրա տեղակալներ, Նախագահության քարտուղար և ԽՍԻՀ Գերագույն Խորհրդի Նախագահության անդամներ:

ՀՈԴՎԱԾ 64. Ինքնավար հանրապետության Գերագույն Խորհրդի Նախագահությունը հաշվետու է Ինքնավար հանրապետության Գերագույն Խորհրդին:

ՀՈԴՎԱԾ 65. Ինքնավար հանրապետության Գերագույն Խորհրդի Նախագահության լիազորությունները որոշվում են ԽՍԻՀ Սահմանադրությամբ:

ՀՈԴՎԱԾ 66. Նիստերը վարելու համար Ինքնավար հանրապետության Գերագույն Խորհուրդն ընտրում է ԽՍԻՀ Գերագույն Խորհրդի նախագահ և նրա տեղակալներ:

ՀՈԴՎԱԾ 67. Ինքնավար հանրապետության Գերագույն Խորհուրդը կազմում է Ինքնավար հանրապետության կառավարություն — ԽՍԻՀ Ժողովրդական կոմիսարների Խորհուրդ:



## ԳԼՈՒԽ VI

## ԱԲԽԱԶԱԿԱՆ ԵՎ ԱՋԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 68. Աբխազական և Աջարական ԽՍԻՀ պետական իշխանության բարձրագույն գործադիր և կարգադրիչ մարմինը հանդիսանում է ԽՍԻՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը:

ՀՈԴՎԱԾ 69. Ինքնավար հանրապետության Ժողովրդական կոմիսարների Խորհուրդը պատասխանատու է Ինքնավար հանրապետության Գերագույն Խորհրդի առջև և հաշվետու է նրան, իսկ Ինքնավար հանրապետության Գերագույն Խորհրդի նստաշրջանների միջև ընկած ժամանակաշրջանում՝ Ինքնավար Հանրապետության Գերագույն Խորհրդի Նախագահության առջև, որին հաշվետու է:

ՀՈԴՎԱԾ 70. ԽՍԻՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը հրատարակում է

վորոշումներ ու կարգադրություններ ԽՍՀ Միության, Վրացական ԽՍՀ և Ինքնավար հանրապետության որենքների, ԽՍՀ Միության և Վրացական ԽՍՀ ժողովրդական Կոմիսարների Խորհուրդների վորոշումների ու կարգադրությունների հիման վրա և ի կատարումն նրանց ու ստուգում է նրանց կատարումը:

ՀՈԴՎԱԾ 71. ԽՍԻՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդն իրավունք ունի բեկանել ԽՍԻՀ Ժողովրդական Կոմիսարների հրամաններն ու հրահանգները, աշխատավորների պատգամավորների շրջանային ու քաղաքային Խորհուրդների գործադիր կոմիտեների վորոշումներն ու կարգադրությունները ԽՍԻՀ տերրիտորիայում, ինչպես նաև կասեցնել աշխատավորների պատգամավորների շրջանային ու քաղաքային Խորհուրդների վորոշումներն ու կարգադրությունները:

ՀՈԴՎԱԾ 72. Ինքնավար Հանրապետության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը կազմվում է Ինքնավար Հանրապետության Գերագույն Խորհրդի կողմից հետևյալ կազմով՝

Ինքնավար Հանրապետության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահ.

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահի տեղակալներ.

Պետական պլանային հանձնաժողովի նախագահ.

Ժողովրդական կոմիսարներ՝

Հողագործության,

Ֆինանսների,

Ներքին առևտրի,

Ներքին գործերի,

Արդարադատության,

Առողջապահության,

Լուսավորության,

Տեղական արդյունաբերության,

Կոմունալ տնտեսության,

Սոցիալական ապահովագրության,

Ճանապարհային վարչության պետ,

Մթերումների կոմիտեյի լիազոր,

Արվեստների գործերի Վարչության պետ,

յեվ, բացի դրանից, Հանրապետության

տնտեսության առանձնահատկություններին համապատասխան, Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի հաստատումով— ժողովրդական կոմիսարներ՝

Սննդի արդյունաբերության,

Թեթև արդյունաբերության,

Անտառային արդյունաբերության:

ՀՈԴՎԱԾ 73. Ինքնավար հանրապետության ժողովրդական կոմիսարները ղեկավարում են Ինքնավար հանրապետության իրավասության մեջ մտնող պետական կառավարման ճյուղերը, համաձայն Վրացական ԽՍՀ և ԽՍԻՀ Սահմանադրությունների:

ՀՈԴՎԱԾ 74. Ինքնավար հանրապետության ժողովրդական կոմիսարները հրատարակում են համապատասխան ժողովրդական կոմիսարիատների իրավասության սահմաններում հրամաններ և հրահանգներ ԽՍՀ Միության, Վրացական ԽՍՀ և ԽՍԻՀ օրենքների, ԽՍՀ Միության, Վրացական ԽՍՀ և ԽՍԻՀ ժողովրդական կոմիսարների Խորհուրդների վորոշումների ու կարգադրությունների, Վրացական ԽՍՀ



ժողովրդական կոմիսարների հրամանների ու հրահանգների հիման վրա և ի կատարումն դրանց:

ՀՈԴՎԱԾ 75. Ինքնավար հանրապետության ժողովրդական կոմիսարիատները ղեկավարում են պետական կառավարման իրենց հանձնարարված ճյուղերը, ենթարկվելով ինչպես ԽՍԻՀ ժողովրդական կոմիսարների Խորհրդին, նույնպես և Վրացական ԽՍՀ համապատասխան ժողովրդական կոմիսարիատներին:

## ԳԼՈՒԽ VII

## ՀԱՐԱՎ–ՈՍԵԹԻԱՅԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 76. Հարավ–Ոսեթիայի Ինքնավար մարզի պետական իշխանության մարմին հանդիսանում ե Հարավ–Ոսեթիայի Ինքնավար մարզի աշխատավորների պատգամավորների Խորհուրդը:

ՀՈԴՎԱԾ 77. Հարավ-Ոսեթիայի Ինքնավար մարզի աշխատավորների պատգամա-

վորների Խորհուրդն ընտրում են Հարավ-Օսեթիայի Ինքնավար մարզի քաղաքացիները երկու տարի ժամանակով, 2·500 բնակչությանը մի պատգամավոր նորմայով:

ՀՈԴՎԱԾ 78. Հարավ-Օսեթիայի Ինքնավար մարզի աշխատավորների պատգամավորների Խորհուրդը ղեկավարում է իրեն ենթակա կառավարման մարմինների գործունեությունը, ապահովում է պետական կարգի պահպանությունը, օրենքների պահպանումը և քաղաքացիների իրավունքների պահպանումը, ղեկավարում է տնտեսական ու կուլտուրական շինարարությունը, հաստատում է մարզային բյուջեն և մարզային ժողովրդա-տնտեսական պլանը:

ՀՈԴՎԱԾ 79. Հարավ-Օսեթիայի Ինքնավար մարզի աշխատավորների պատգամավորների Խորհուրդն ընդունում է որոշումներ և տալիս է կարգադրություններ ԽՍՀ Միության և Վրացական ԽՍՀ օրենքներով նրան ընձեռված իրավունքների սահմանում:



ՀՈԴՎԱԾ 80. Հարավ-Օսեթիայի Ինքնավար մարզի աշխատավորների պատգամավորների Խորհրդի գործադիր և կարգադրիչ մարմինը հանդիսանում է Հարավ-Օսեթիայի Ինքնավար մարզի աշխատավորների պատգամավորների Խորհրդի գործադիր կոմիտեն, որն ընտրվում է Հարավ-Օսեթիայի Ինքնավար մարզի աշխատավորների պատգամավորների Խորհրդի կողմից՝ կազմված նախագահից, նախագահի երկու տեղակալից, քարտուղարից և 7 անդամից:

ՀՈԴՎԱԾ 81. Պետական կառավարման առանձին ճյուղերի ղեկավարության համար Հարավ-Օսեթիայի Ինքնավար մարզի աշխատավորների պատգամավորների Խորհրդի գործադիր կոմիտեն կազմում է ներքոհիշյալ բաժինները·

հողային,
ֆինանսային,
ներքին առևտրի,
առողջապահության,
ժողովրդական կրթության,
տեղական արդյունաբերության,

կոմունալ տնտեսության,
անտառային տնտեսության,
սոցիալական ապահովության,
ճանապարհային,
ընդհանուր,
արվեստների գործերի,
պլանային հանձնաժողով,
կադրերի սեկտոր՝ գործկոմի նախագահին կից,

յեվ, բացի դրանից, Հարավ – Ոսեթիայի Ինքնավար մարզի աշխատավորների պատգամավորների Խորհրդի գործադիր կոմիտեյին կից կան՝

Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի Վարչություն,
Մթերումների կոմիտեյի լիազոր:

ՀՈԴՎԱԾ 82. Հարավ–Ոսեթիայի Ինքնավար մարզի բաժիններն ու վարչություններն իրենց գործունեության մեջ ենթարկվում են ինչպես Հարավ-Ոսեթիայի Ինքնավար մարզի աշխատավորների պատգամավորների Խորհրդին և նրա գործադիր կոմիտեյին, այնպես և Վրացական



ԽՍՀ համապատասխան ժողովրդական կոմիսարիատներին:

ՀՈԴՎԱԾ 83. Հարավ–Ոսեթիայի Ինքնավար մարզի պետական իշխանության շրջանային, քաղաքային և գյուղական մարմինները կազմվում են ներկա Սահմանադրության 8-րդ գլխի հիման վրա:

## ԳԼՈՒԽ VIII

## ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 84. Վրացական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության շրջաններում, քաղաքներում, ավաններում և գյուղերում պետական իշխանության մարմիններ են հանդիսանում աշխատավորների պատգամավորների Խորհուրդները:

ՀՈԴՎԱԾ 85. Աշխատավորների պատգամավորների շրջանային, քաղաքային, խոշոր քաղաքներում շրջանային, ավանային և գյուղական Խորհուրդներն ընտրվում են համապատասխան շրջանի, քաղա-

քի, ավանի, գյուղի աշխատավորների կողմից յերկու տարի ժամանակով։

ՀՈԴՎԱԾ 86․ Աշխատավորների պատգամավորների շրջանային խորհուրդներն ընտրվում են 300 բնակչությանը մի պատգամավոր նորմայով։

ՀՈԴՎԱԾ 87․ Աշխատավորների պատգամավորների քաղաքային խորհուրդներն ընտրվում են հետևյալ նորմայով՝ Փոթի քաղաքում՝ 200 բնակչությանը մի պատգամավոր, Քութայիսի քաղաքում — 400 բնակչությանը մի պատգամավոր, Թբիլիսի քաղաքում—700 բնակչությանը մի պատգամավոր, մնացած քաղաքներում՝ ա) մինչև 10․000 բնակչությամբ՝ 100 հոգուն մի պատգամավոր, բ) ավելի քան 10․000 բնակչությամբ՝ 150 հոգուն մի պատգամավոր։

ՀՈԴՎԱԾ 88․ Աշխատավորների պատգամավորների ավանային ու գյուղական խորհուրդներն ընտրվում են՝ նայած ավանային և գյուղական խորհրդի գործունեության շրջանի չափերին—ոչ պակաս, քան



50, և ոչ ավելի, քան 150 բնակչությունից—մեկ պատգամավոր։

Աշխատավորների պատգամավորների ավանային ու գյուղական խորհուրդների համար ընտրական նորմաները սահմանվում են «Վրացական ԽՍՀ աշխատավորների պատգամավորների խորհուրդների ընտրությունների կանոնադրությամբ», ներկա հոդվածում մատնանշված ընտրական նորմաների սահմաններում։

ՀՈԴՎԱԾ 89․ Աշխատավորների պատգամավորների խորհուրդները (շրջանի, քաղաքի, գյուղի) ղեկավարում են կուլտուր-քաղաքական և տնտեսական շինարարությունն իրենց տերրիտորիայում, սահմանում են տեղական բյուջեն, ղեկավարում են իրենց յենթակա կառավարման մարմինների գործունեությունը, ապահովում են պետական կարգի պահպանումը, աջակցում են յերկրի պաշտպանունակության ուժեղացմանը, ապահովում են օրենքների պահպանումը և քաղաքացիների իրավունքների պահպանումը։

ՀՈԴՎԱԾ 90․ Աշխատավորների պատգա-

մավորների խորհուրդներն ընդունում են որոշումներ և անում են կարգադրություններ ԽՍՀ Միության, Վրացական ԽՍՀ և Ինքնավար հանրապետության օրենքներով նրանց ընձեռած օրենքների սահմաններում:

ՀՈԴՎԱԾ 91․ Աշխատավորների պատգամավորների շրջանային խորհուրդների նստաշրջանները հրավիրվում են նրանց գործադիր կոմիտեների կողմից ոչ ուշ, քան տարեկան վեց անգամ:

ՀՈԴՎԱԾ 92․ Աշխատավորների պատգամավորների քաղաքային, ավանային և գյուղական խորհուրդների նստաշրջանները հրավիրում են նրանց գործադիր մարմինները ոչ պակաս, քան ամսական մեկ անգամ:

ՀՈԴՎԱԾ 93․ Աշխատավորների պատգամավորների շրջանային, քաղաքային, ավանային և գյուղական խորհուրդների գործադիր ու կարգադրիչ մարմիններ հանդիսանում են նրանց ընտրած գործադիր կոմիտեները՝ բաղկացած նախագահից, նրա



տեղակալներից, քարտուղարից և անդամներից:

ՀՈԴՎԱԾ 94․ Աշխատավորների պատգամավորների ոչ ավելի, քան 500 բնակչություն միավորող ավանային ու գյուղական խորհուրդների գործադիր ու կարգադրիչ մարմիններ հանդիսանում են այդ խորհուրդների կողմից ընտրվող նախագահը, նրա տեղակալը և քարտուղարը:

ՀՈԴՎԱԾ 95․ Աշխատավորների պատգամավորների խորհուրդների (շրջանի, քաղաքի, գյուղի) գործադիր կոմիտեներն իրականացնում են կուլտուր-քաղաքական և տնտեսական շինարարության ղեկավարությունն իրենց տերիտորիայում՝ աշխատավորների պատգամավորների համապատասխան խորհուրդների և վերադաս պետական մարմինների որոշումների հիման վրա:

ՀՈԴՎԱԾ 96․ Աշխատավորների պատգամավորների շրջանային ու քաղաքային խորհուրդներն իրենց նստաշրջանի ժամանակ ընտրում են նախագահ և քարտուղար՝ նստաշրջանի նիստերը վարելու համար:

ՀՈԴՎԱԾ 97. Գյուղական Խորհրդի նախագահը հրավիրում է գյուղական Խորհուրդը և վարում նրա նիստերը։

ՀՈԴՎԱԾ 98. Աշխատավորների պատգամավորների Խորհուրդների գործադիր կոմիտեներն անմիջականորեն հաշվետու են ինչպես իրենց ընտրող աշխատավորների պատգամավորների Խորհրդին, նույնպես և աշխատավորների պատգամավորների վերադաս Խորհրդի գործադիր մարմնին։

ՀՈԴՎԱԾ 99. Աշխատավորների պատգամավորների Խորհուրդների վերադաս գործադիր կոմիտեներն իրավունք ունեն բեկանել ստորադաս գործադիր կոմիտեների վորոշումներն ու կարգադրությունները և կասեցնել աշխատավորների պատգամավորների ստորադաս Խորհուրդների վորոշումներն ու կարգադրությունները։

ՀՈԴՎԱԾ 100. Աշխատավորների պատգամավորների վերադաս Խորհուրդներն իրավունք ունեն բեկանել աշխատավորների պատգամավորների ստորադաս Խորհուրդների և նրանց գործադիր կոմիտեների վորոշումներն ու կարգադրությունները։



ՀՈԴՎԱԾ 101. Պետական կառավարման առանձին ճյուղերի անմիջական ղեկավարության համար աշխատավորների պատգամավորների շրջանային ու քաղաքային Խորհուրդները կազմում են գործադիր կոմիտեների բաժիններ։

ՀՈԴՎԱԾ 102. Աշխատավորների պատգամավորների շրջանային Խորհուրդները կազմում են գործադիր կոմիտեների հետևյալ բաժինները.

հողային,
ժողովրդական կրթության,
ֆինանսային,
ներքին առևտրի,
առողջապահության,
սոցիալական ապահովության,
ընդհանուր,
ճանապարհային,
պլանային հանձնաժողով,
կադրերի սեկտոր՝ գործկոմի նախագահին կից,

և, բացի դրանից, շրջանի տնտեսության առանձնահատկություններին համապատասխան, Վրացական ԽՍՀ Գերագույն

Խորհրդի, Ինքնավար հանրապետությունների Գերագույն Խորհուրդների և Ինքնավար մարզի աշխատավորների պատգամավորների Խորհրդի հաստատումով աշխատավորների պատգամավորների շրջանային Խորհուրդները կազմում են կոմունալ և տեղական արդյունաբերության բաժիններ։

ՀՈԴՎԱԾ 103. Շրջանի պայմաններին համապատասխան, ԽՍՀ Միության և Վրացական ԽՍՀ օրենքների հիման վրա, Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի, Ինքնավար հանրապետությունների Գերագույն Խորհուրդների և Ինքնավար մարզի աշխատավորների պատգամավորների Խորհրդի հաստատումով, Ներքին գործերի Ժողովրդական Կոմիսարիատն աշխատավորների պատգամավորների շրջանային Խորհուրդներին կից սահմանում է իր վարչությունները:

ՀՈԴՎԱԾ 104. Աշխատավորների պատգամավորների քաղաքային Խորհուրդներն ստեղծում են գործադիր կոմիտեների հետևյալ բաժինները.

Ֆինանսային,



կոմունալ տնտեսության,

ներքին առևտրի,

առողջապահության,

ժողովրդական կրթության,

սոցիալական ապահովության,

ընդհանուր,

պլանային հանձնաժողով,

կադրերի սեկտոր՝ գործկոմի նախագահին կից, և, բացի դրանից, քաղաքի արդյունաբերության, նրա քաղաքային ու միջքաղաքային տնտեսության առանձնահատկություններին համապատասխան՝

տեղական արդյունաբերության,

հողային:

ՀՈԴՎԱԾ 105. Աշխատավորների պատգամավորների շրջանային Խորհուրդների բաժիններն իրենց գործունեության մեջ ենթարկվում են աշխատավորների պատգամավորների շրջանային Խորհրդին և նրա գործադիր կոմիտեին, ինչպես նաև Վրացական ԽՍՀ համապատասխան Ժողովրդական Կոմիսարիատին, իսկ Ինքնավար հանրապետություններում և Ինքնավար մարզում՝ Ինքնավար մարզի համապատասխան

ժողովրդական կոմիսարիատին կամ ինքնավար մարզի գործադիր կոմիտեի համապատասխան բաժնին։

ՀՈԴՎԱԾ 106․ Աշխատավորների պատգամավորների քաղաքային Խորհուրդների բաժիններն իրենց գործունեության մեջ յենթարկվում են ինչպես աշխատավորների պատգամավորների քաղաքային Խորհրդին և նրա գործադիր կոմիտեին, նույնպես և աշխատավորների պատգամավորների շրջանային Խորհրդի համապատասխան բաժնին, նաև Վրացական ԽՍՀ համապատասխան ժողովրդական կոմիսարիատին, իսկ ինքնավար հանրապետություններում յեվ ինքնավար մարզում՝ ինքնավար հանրապետության համապատասխան ժողովրդական կոմիսարիատին կամ ինքնավար մարզի գործադիր կոմիտեի համապատասխան բաժնին։

ՀՈԴՎԱԾ 107․ Թբիլիսի և Փոթի քաղաքների աշխատավորների պատգամավորների Խորհուրդների բաժիններն իրենց գործունեության մեջ յենթարկվում են ինչպես աշխատավորների պատգամավորների քա-



ղաքային Խորհրդին և նրա գործադիր կոմիտեին, նույնպես և Վրացական ԽՍՀ համապատասխան ժողովրդական կոմիսարիատին։

ՀՈԴՎԱԾ 108․ Սուխումի քաղաքի աշխատավորների պատգամավորների Խորհրդի բաժիններն իրենց գործունեության մեջ յենթարկվում են ինչպես աշխատավորների պատգամավորների քաղաքային Խորհրդին և նրա գործադիր կոմիտեին, նույնպես և Աբխազական ԽՍՐՀ համապատասխան ժողովրդական կոմիսարիատին։

ՀՈԴՎԱԾ 109․ Բաթումի քաղաքի աշխատավորների պատգամավորների Խորհրդի բաժիններն իրենց գործունեության մեջ յենթարկվում են ինչպես աշխատավորների պատգամավորների քաղաքային Խորհրդին և նրա գործադիր կոմիտեին, նույնպես և Աջարական ԽՍՐՀ համապատասխան ժողովրդական կոմիսարիատին։

ՀՈԴՎԱԾ 110․ Ստալինիր քաղաքի աշխատավորների պատգամավորների Խորհրդի բաժիններն իրենց գործունեության մեջ յենթարկվում են ինչպես աշխատա-

վորների պատգամավորների քաղաքային Խորհրդին և նրա գործադիր կոմիտեին, նույնպես և Հարավ-Օսեթիայի Ինքնավար մարզի աշխատավորների պատգամավորների Խորհրդի գործադիր կոմիտեի համապատասխան բաժնին:

ՀՈԴՎԱԾ 111. Աշխատավորների պատգամավորների Խորհրդի լիազորությունները լրանալուց հետո նրանց գործադիր ու կարգադրիչ մարմինները պահում են իրենց լիազորությունները մինչև նորընտիր Խորհուրդների կողմից նոր գործադիր և կարգադրիչ մարմինների ստեղծումը:

## ԳԼՈՒԽ IX

## ՎՐԱՑԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՆ

ՀՈԴՎԱԾ 112. Վրացական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության պետական բյուջեն կազմում է Վրացական ԽՍՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը և ներկայացնում այն Վրացական



ԽՍՀ Գերագույն Խորհրդին՝ ի հաստատություն:

ՀՈԴՎԱԾ 113. Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհուրդն ընտրում է բյուջետային հանձնաժողով, վորը զեկուցում է Գերագույն Խորհրդին իր եզրակացությունը Վրացական ԽՍՀ պետական բյուջեյի վերաբերյալ:

ՀՈԴՎԱԾ 114. Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի կողմից հաստատված Վրացական ԽՍՀ պետական բյուջեն հրապարակվում է ի գիտություն բոլորի:

ՀՈԴՎԱԾ 115. Վրացական ԽՍՀ պետական բյուջեյի կատարման վերաբերյալ հաշվետվությունը հաստատվում է Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի կողմից և հրապարակվում է ի գիտություն բոլորի:

ՀՈԴՎԱԾ 116. Աբխազական և Աջարական Ինքնավար հանրապետությունների, Հարավ-Օսեթիայի Ինքնավար մարզի բյուջեների և շրջանային, քաղաքային, ավանային ու գյուղական Խորհուրդների տեղական բյուջեների մեջ ներառվում են տե-

ղական տնտեսությունից ստացվող յեկամուտները, նրանց տերրիտորիայում ստացվող պետական յեկամուտներից յեղած հատկացումները, ինչպես նաև ստացումները տեղական հարկերից ու գանձումներից՝ ԽՍՀ Միության և Վրացական ԽՍՀ օրենսդրությամբ սահմանված չափերով:

## ԳԼՈՒԽ X

## ԴԱՏԱՐԱՆ ՅԵՎ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾ 117․ Վրացական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության մեջ արդարադատությունն իրականացվում է Վրացական ԽՍՀ Գերագույն Դատարանի, Աբխազական և Աջարական Ինքնավար Հանրապետությունների Գերագույն դատարանների, Հարավ-Ոսեթիայի Ինքնավար մարզի դատարանի, ԽՍՀ Միության Գերագույն Խորհրդի վորոշմամբ ստեղծվող հատուկ դատարանների, ժողովրդական դատարանների միջոցով:

ՀՈԴՎԱԾ 118․ Գործերի քննությունը բոլոր դատարաններում կատարվում է ժողովրդական ատենակալների մասնակցությամբ, բացի օրենքով հատկապես նախատեսված դեպքերից:



ՀՈԴՎԱԾ 119․ Վրացական ԽՍՀ Գերագույն Դատարանը հանդիսանում է Վրացական ԽՍՀ բարձրագույն դատական մարմինը: Վրացական ԽՍՀ Գերագույն Դատարանի վրա դրվում է Վրացական ԽՍՀ, Աբխազական և Աջարական Ինքնավար Հանրապետությունների և Հարավ-Ոսեթիայի Ինքնավար մարզի բոլոր դատարանական մարմինների դատական գործունեության հսկողությունը:

ՀՈԴՎԱԾ 120․ Վրացական ԽՍՀ Գերագույն Դատարանն ընտրվում է Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի կողմից հինգ տարի ժամանակով:

ՀՈԴՎԱԾ 121․ Ինքնավար Հանրապետությունների Գերագույն դատարաններն ընտրվում են Ինքնավար Հանրապետությունների Գերագույն Խորհուրդների կողմից հինգ տարի ժամանակով:

ՀՈԴՎԱԾ 122․ Հարավ-Ոսեթիայի Ինքնավար մարզի դատարանն ընտրվում է

Հարավ-Ոսեթիայի Ինքնավար մարզի աշխատավորների պատգամավորների Խորհրդի կողմից հինգ տարի ժամանակով։

ՀՈԴՎԱԾ 123. Ժողովրդական դատարաններն ընտրում են շրջանի քաղաքացիները՝ ընդհանուր, ուղղակի և հավասար ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ, յերեք տարի ժամանակով։

ՀՈԴՎԱԾ 124. Վրացական ԽՍՀ տերիտորիայում դատավարությունը կատարվում է վրացական լեզվով կամ Ինքնավար Հանրապետության, կամ Ինքնավար մարզի լեզվով, այդ լեզվին չտիրապետող անձանց համար ապահովելով լրիվ ծանոթացում գործի նյութերին թարգմանի միջոցով, ինչպես նաև դատարանում մայրենի լեզվով հանդես գալու իրավունքը։

ՀՈԴՎԱԾ 125. Գործերի քննությունը Վրացական ԽՍՀ բոլոր դատարաններում, վոր չափով որենքը բացառություններ չի նախատեսել, կատարվում է դռնբաց, ապահովելով մեղադրյալի պաշտպանության իրավունքը։



ՀՈԴՎԱԾ 126. Դատավորներն անկախ են և յենթարկվում են միայն որենքին։

ՀՈԴՎԱԾ 127. Բոլոր ժողովրդական կոմիսարիատների և նրանց դերատեսչությանը յենթակա հիմնարկությունների, ինչպես և առանձին պաշտոնատար անձանց, ինչպես նաև Վրացական ԽՍՀ տերիտորիայում քաղաքացիների կողմից որենքները ճշգրիտ կերպով կատարելու բարձրագույն հսկողությունն իրականացվում է ինչպես անմիջականորեն ԽՍՀ Միության Դատախազության կողմից, նույնպես և Վրացական ԽՍՀ Դատախազի միջոցով։

ՀՈԴՎԱԾ 128. Վրացական ԽՍՀ, Ինքնավար Հանրապետությունների և Ինքնավար մարզի դատախազները նշանակվում են ԽՍՀ Միության Դատախազի կողմից հինգ տարի ժամանակով։

ՀՈԴՎԱԾ 129. Շրջանային և քաղաքային դատախազները նշանակվում են Վրացական ԽՍՀ Դատախազի կողմից՝ ԽՍՀ Միության Դատախազի հաստատությամբ՝ հինգ տարի ժամանակով։

ՀՈԴՎԱԾ 130. Դատախազության մարմիններն իրենց ֆունկցիաներն իրագործում են անկախ տեղական որևէ մարմնից, ենթարկվելով միմիայն ԽՍՀ Միության Դատախազին:

## ԳԼՈՒԽ XI

## ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՅԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 131. Վրացական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության քաղաքացիներն ունեն աշխատանքի իրավունք, այսինքն՝ երաշխավորված աշխատանք ստանալու իրավունք, իրենց աշխատանքի քանակի ու որակի համապատասխան վարձատրությամբ:

Աշխատանքի իրավունքն ապահովվում է ժողովրդական տնտեսության սոցիալիստական կազմակերպումով, խորհրդային հասարակության արտադրողական ուժերի անշեղ աճումով, տնտեսական ճգնաժամե-



րի հնարավորության վերացումով և գործազրկության լուծարքով:

ՀՈԴՎԱԾ 132. Վրացական ԽՍՀ քաղաքացիներն ունեն հանգստի իրավունք:

Հանգստի իրավունքն ապահովվում է աշխատանքային օրվա կրճատումով բանվորների ճնշող մեծամասնության համար մինչև յոթ ժամ, բանվորների ու ծառայողների համար սահմանելով ամենամյա արձակուրդներ աշխատավարձի պահպանումով, տրամադրելով սանատորիաների, հանգստյան տների, ակումբների լայն ցանց աշխատավորներին սպասարկելու համար:

ՀՈԴՎԱԾ 133. Վրացական ԽՍՀ քաղաքացիներն ունեն նյութական ապահովության իրավունք ծերության, ինչպես և հիվանդության և աշխատունակությունը կորցնելու դեպքում:

Այդ իրավունքն ապահովվում է բանվորների ու ծառայողների՝ պետության հաշվին կատարվող սոցիալական ապահովագրության լայն ծավալմամբ, աշխատավորներին ձրի բժշկական օգնություն ցույց

տալով, աշխատավորներին օգտագործման համար կուրորտների լայն ցանց տրամադրելով:

ՀՈԴՎԱԾ 134. Վրացական ԽՍՀ քաղաքացիները կրթության իրավունք ունեն:

Այդ իրավունքն ապահովվում է ընդհանուր պարտադիր տարրական կրթությամբ, ձրի կրթությամբ, ներառյալ բարձրագույն կրթությունը, պետական թոշակների սիստեմով բարձրագույն դպրոցի ուսանողների ճնշող մեծամասնության համար, մայրենի լեզվի ուսուցմամբ դպրոցներում, աշխատավորների ձրի արտադրական, տեխնիկական և ագրոնոմիական ուսուցման կազմակերպումով գործարաններում, խորհտնտեսություններում, մեքենատրակտորային կայաններում և կոլտնտեսություններում:

ՀՈԴՎԱԾ 135. Վրացական ԽՍՀ մեջ կնոջը տրվում են տղամարդուն հավասար իրավունքներ տնտեսական, պետական, կուլտուրական և հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ասպարեզներում:

Կանանց այդ իրավունքների իրագործ-



ման հնարավորությունն ապահովվում է՝ տալով կնոջը տղամարդուն հավասար իրավունքներ աշխատանքի, աշխատավարձի, հանգստի, սոցիալական ապահովագրության և կրթության նկատմամբ, մոր և մանկան շահերի պետական պաշտպանությամբ, հղիության դեպքում տալով կնոջըն արձակուրդ, պահպանելով աշխատավարձը, ծննդատների, մանկական մսուրների և մանկապարտեզների լայն ցանցով:

ՀՈԴՎԱԾ 136. Վրացական ԽՍՀ քաղաքացիների իրավահավասարությունը՝ անկախ նրանց ազգությունից և ռասայից, տնտեսական, պետական, կուլտուրական և հասարակական – քաղաքական կյանքի բոլոր ասպարեզներում՝ անխախտ օրենք է հանդիսանում:

Իրավունքների որևէ ուղղակի կամ անուղղակի սահմանափակում և, ընդհակառակը, քաղաքացիների ուղղակի կամ անուղղակի առավելությունների սահմանում ըստ նրանց ռասայական և ազգային պատկանելության, հավասարապես և ռասայական կամ ազգային բացառիկության,

կամ ատելության ու արհամարհանքի ամեն մի քարոզ պատժվում են օրենքով։

ՀՈԴՎԱԾ 137. Քաղաքացիների համար խղճի ազատությունն ապահովելու նպատակով Վրացական ԽՍՀ-ում եկեղեցին բաժանված է պետությունից և դպրոցը՝ եկեղեցուց։ Կրոնական պաշտամունքների կատարման ազատությունը և հակակրոնական պրոպագանդի ազատությունը ճանաչվում է բոլոր քաղաքացիների համար։

ՀՈԴՎԱԾ 138. Աշխատավորների շահերին համապատասխան և սոցիալիստական կարգն ամրացնելու նպատակով Վրացական ԽՍՀ քաղաքացիների համար օրենքը երաշխավորում է՝

ա) խոսքի ազատություն,

բ) մամուլի ազատություն,

գ) ժողովների և միտինգների ազատություն,

դ) փողոցային երթերի և ցույցերի ազատություն։

Քաղաքացիների այդ իրավունքներն ապահովվում են՝ աշխատավորներին և նրանց կազմակերպություններին տրամադրելով տպարաններ, թղթի պաշարներ, հասարակական շենքեր, փողոցներ, կապի միջոցներ և նյութական այլ պայմաններ, որոնք անհրաժեշտ են դրանց իրականացման համար։



ՀՈԴՎԱԾ 139. Աշխատավորների շահերին համապատասխան և ժողովրդական մասսաների կազմակերպչական ինքնագործունեությունն ու քաղաքական ակտիվությունը զարգացնելու նպատակով ապահովվում է Վրացական ԽՍՀ քաղաքացիների իրավունքը՝ միավորվելու հասարակական կազմակերպությունների մեջ՝ արհեստակցական միություններ, կոոպերատիվ միավորումներ, երիտասարդության կազմակերպություններ, սպորտային և պաշտպանողական կազմակերպություններ, կուլտուրական, տեխնիկական ու գիտական ընկերություններ, իսկ բանվոր դասակարգի շարքերից ու աշխատավորների մյուս խավերից ամենից ավելի ակտիվ ու գիտակից քաղաքացիները համախմբվում են Համամիութենական Կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության մեջ,

վորն աշխատավորների առաջավոր ջոկատըն է՝ սոցիալիստական հասարակարգն ամրացնելու ու զարգացնելու համար նրանց մղած պայքարում և աշխատավորների բոլոր, ինչպես հասարակական, այնպես և պետական կազմակերպությունների ղեկավար կորիզն է ներկայացնում:

ՀՈԴՎԱԾ 140. Վրացական ԽՍՀ քաղաքացիների համար ապահովվում է անձի անձեռնմխելիություն: Վոչ վոք չի կարող ձերբակալվել այլապես, քան դատարանի վորոշմամբ կամ դատախազի սանկցիայով:

ՀՈԴՎԱԾ 141. Քաղաքացիների բնակարանի անձեռնմխելիությունը և գրագրության գաղտնիքը պահպանվում է որենքով:

ՀՈԴՎԱԾ 142. Վրացական ԽՍՀ ապաստանի իրավունք է վերապահում օտարերկրյա քաղաքացիներին, վորոնք հալածվում են աշխատավորների շահերի պաշտպանության, կամ գիտական գործունեության, կամ ազգային-ազատագրական պայքարի համար:



ՀՈԴՎԱԾ 143. Վրացական ԽՍՀ յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է պահպանել Վրացական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Սահմանադրությունը, կատարել որենքները, պահպանել աշխատանքի կարգապահությունը, ազնվորեն վերաբերվել դեպի հասարակական պարտքը, հարգել սոցիալիստական համակեցության կանոնները:

ՀՈԴՎԱԾ 144. Վրացական ԽՍՀ յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է պահպանել և ամրացնել հասարակական, սոցիալիստական սեփականությունը, վորպես խորհրդային իրավակարգի սրբազան և անձեռնմխելի հիմք, վորպես հայրենիքի հարստության և հզորության աղբյուր, վորպես բոլոր աշխատավորների ունևոր և կուլտուրական կյանքի աղբյուր:

Հասարակական, սոցիալիստական սեփականության վրա ձեռք բարձրացնող անձերը հանդիսանում են ժողովրդի թշնամիներ:

ՀՈԴՎԱԾ 145. Ընդհանուր զինվորական

պարտականությունն որենք է հանդիսանում:

Զինվորական ծառայությունը Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակում Վրացական ԽՍՀ քաղաքացիների պատվավոր պարտականությունն է:

ՀՈԴՎԱԾ 146. Հայրենիքի պաշտպանությունը Վրացական ԽՍՀ յուրաքանչյուր քաղաքացու սրբազան պարտքն է: Հայրենիքին դավաճանելը՝ յերդմնազանցությունը, թշնամու կողմն անցնելը, պետության ռազմական հզորությանը վնաս հասցնելը, լրտեսությունը — պատժվում են որենքի վողջ խստությամբ, վորպես ամենածանր չարագործություն:

## ԳԼՈՒԽ XII

## ԸՆՏՐԱԿԱՆ ՍԻՍՏԵՄԸ

ՀՈԴՎԱԾ 147. Աշխատավորների պատգամավորների բոլոր Խորհուրդների՝ Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի, Ինքնավար Հանրապետությունների Գերագույն Խորհուրդների, Ինքնավար մարզի աշխա-



տավորների պատգամավորների Խորհուրդների, շրջանային, քաղաքային, ավանային և գյուղական աշխատավորների պատգամավորների Խորհուրդների ընտրությունները—կատարվում են ընտրողների ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա գաղտնի քվեարկությամբ:

ՀՈԴՎԱԾ 148. Պատգամավորների ընտրությունները ընդհանուր են. Վրացական ԽՍՀ 18 տարին լրացրած բոլոր քաղաքացիները, անկախ ռասային և ազգային պատկանելիությունից, դավանանքից, կրթական ցենզից, նստակեցությունից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից և անցյալ գործունեությունից, իրավունք ունեն մասնակցելու պատգամավորների ընտրություններին և ընտրվելու, բացառությամբ խելագարների և դատարանով ընտրական իրավունքներից զրկվելու դատապարտված անձերի:

ՀՈԴՎԱԾ 149. Պատգամավորների ընտրությունները հավասար են. ամեն մի

քաղաքացի ունի մի ձայն. բոլոր քաղաքացիներն ընտրություններին մասնակցում են հավասար հիմունքներով:

ՀՈԴՎԱԾ 150. Կանայք ընտրելու և ընտրվելու իրավունքից օգտվում են տղամարդկանց հետ համահավասար:

ՀՈԴՎԱԾ 151. Կարմիր Բանակի շարքերում գտնվող քաղաքացիները բոլոր քաղաքացիներին համահավասար օգտվում են ընտրելու և ընտրվելու իրավունքից:

ՀՈԴՎԱԾ 152. Պատգամավորների ընտրություններն ուղղակի են. ընտրություններն աշխատավորների պատգամավորների բոլոր Խորհուրդներում, սկսած աշխատավորների պատգամավորների գյուղական և քաղաքային Խորհրդից մինչև Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհուրդը, քաղաքացիները կատարում են անմիջականորեն, ուղղակի ընտրությունների միջոցով:

ՀՈԴՎԱԾ 153. Պատգամավորների ընտրությունների ժամանակ քվեարկությունը հանդիսանում է գաղտնի:



ՀՈԴՎԱԾ 154. Ընտրությունների ժամանակ թեկնածուներն առաջարկվում են ըստ ընտրական շրջանների:

Թեկնածուներ առաջադրելու իրավունքն ապահովվում է աշխատավորների հասարակական կազմակերպությունների և ընկերությունների՝ կոմունիստական կուսակցական կազմակերպությունների, պրոֆեսիոնալ միությունների, կոոպերատիվների, երիտասարդության կազմակերպությունների, կուլտուրական ընկերությունների համար:

ՀՈԴՎԱԾ 155. Յուրաքանչյուր պատգամավոր պարտավոր է ընտրողների առջև հաշիվ տալ իր աշխատանքի և աշխատավորների պատգամավորների Խորհրդի աշխատանքի մասին և կարող է ամեն ժամանակ յետ կանչվել ընտրողների մեծամասնության վորոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով:

## ԳԼՈՒԽ XIII

# ԼԵԶՈՒՆ, ԳԵՐԲԸ, ԴՐՈՇԱԿԸ ՅԵՎ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ

ՀՈԴՎԱԾ 156. Վրացական ԽՍՀ պետական լեզուն հանդիսանում է վրացական լեզուն:

Վրացական ԽՍՀ տերրիտորիայում բընակվող ազգային փոքրամասնությունների համար ապահովվում է մայրենի լեզվի ազատ զարգացման ու գործածման իրավունքը ինչպես իրենց կուլտուրական, նույնպես և պետական հիմնարկություններում:

ՀՈԴՎԱԾ 157. Օրենքները, ինչպես նաև Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության հրամանագրերն ու բացատրությունները, Վրացական ԽՍՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի վորոշումներն ու կարգադրությունները հրապարակվում են վրացական լեզվով, իսկ Ինքնավար Հանրապետությունների և Ինքնավար մարզի համար՝ վրացական լեզվով



և Ինքնավար Հանրապետության կամ Ինքնավար մարզի լեզվով:

ՀՈԴՎԱԾ 158. Օրենքները, ինչպես նաև Ինքնավար Հանրապետությունների Գերագույն Խորհրդի Նախագահության հրամանագրերն ու բացատրությունները, Ինքնավար Հանրապետությունների Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի վորոշումներն ու կարգադրությունները, Ինքնավար մարզի աշխատավորների պատգամավորների Խորհրդի գործադիր կոմիտեյի վորոշումներն ու կարգադրությունները հրապարակվում են Ինքնավար Հանրապետության կամ Ինքնավար մարզի լեզվով և վրացական լեզվով:

ՀՈԴՎԱԾ 159. Վրացական ԽՍՀ գերբը բաղկացած է կլոր կարմիր դաշտից, վորի վերին մասում նկարված է հնգաթև լուսավոր աստղ, ճառագայթները փռած վողջ դաշտի վրա, ներքևում՝ ձյունածածկ յերկնագույն լեռնաշղթա, աջ կողմում՝ վոսկեգույն հասկեր և ձախ կողմում՝ վոսկեգույն վազեր խաղողի ճյուղերով: Հա-

կերի և վազերի ծայրերն իրար են միաձուլված լեռնաշղթայի ստորոտում, դաշտի ստորին մասում: Մեջտեղի մեծ մասը զբաղվում են վոսկեգույն մանգաղի ու մուրճի պատկերները, վորոնք հպվում են՝ վերևում լուսավոր աստղին, ներքևում լեռնաշղթայի գագաթին, իսկ կողքերից՝ հասկերին ու վազերին: Դաշտի շուրջը կա մակագրություն յերկու լեզվով՝ վրացերեն և ռուսերեն — «Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք»: Գերբը շրջափակված է վրացական վոճի որնամենտներով:

ՀՈԴՎԱԾ 160. Վրացական ԽՍՀ դրոշակը բաղկացած է կարմիր գույնի կտավից. Նրա ձախ անկյունում, վերևից, քառակուսու մեջ, վորի կողմերը հավասար են ամբողջ քաթանի յերկարության մեկ քառորդին, զետեղված է «Վրացական ԽՍՀ» վոսկեգիր մակագրությունը վրացական լեզվով:

ՀՈԴՎԱԾ 161. Վրացական ԽՍՀ մայրաքաղաքը հանդիսանում է Թբիլիսի քաղաքը:



## ԳԼՈՒԽ XIV

## ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳԸ

ՀՈԴՎԱԾ 162. Վրացական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Սահմանադրության փոփոխումը կատարվում է միայն Վրացական ԽՍՀ Գերագույն Խորհրդի վորոշմամբ, ընդունված ձայների վոչ պակաս քան 2/3-ի մեծամասնությամբ:

4075

ՀՀ Ազգային գրադարան
NL0207747

34.632

Վր. Կ(բ) Կ Կենտկոմի
«ԶԱՐՅԱ ՎՈՍՏՈԿԱ»
հրատարակչություն